

ՓՍԱՆԵՐԵՓԵՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».

կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Փ օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ.
Տ է Լ Է Փ օ ն № 253.

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԵՅՈՐՄԱՆԵՐԻ

Ծ Ր Ա Գ Ի Ր Ը

ՆԵՐԿԱՅԱՅՐԱԾ ՍՈՒԼԹԱՆԻՆ

Պ. ՊՕԼՍՈՒՄ, մայիսի 11-ին, երեք պե-
տոթիւնէն երբ ՄԵԾ-ԲՐԻՄԱՆԻԱՅԻ, ՖԵ-
ՔԱՆՍԻԱՅԻ և ՌՈՍԱՍՏԱՆԻ ԼԻԽՂՕՐ
դեսպանները կողմից:

(Լիախառար ընտրելով, թարգմանած անգլիերէնից)

ՄԵՄՈՐԱՆ ԳՈՒՄ

Մարտ-ապրիլ, 1895 թ.

Արան կցած ծրագիրը պարունակում է իր մէջ
գլխաւոր հիմունքները այն բարեփոխութիւնների,
որոնք պէտք է մտցնեն ներքե յիշված վիճակո-
ւան վարչական, ֆինանսական և դատաստանա-
կան կազմակերպութեան մէջ: Օգտակար համար-
վեց մի առանձին մեմորանդումով ցույց տալ վար-
չական բարեփոխութեան այն որոշ միջոցները,
որոնք կազմում են գլխաւոր հիմունքը երկրի
սահմանադրութեան և որոնք ընդունելը Բ. Կը-
քան կողմից՝ ունի մեծ կարևորութիւն:

Առանձին կէտերը սրանք են.

- 1) Վիճակների թիւ պակասեցնելը:
- 2) Վալաների ընտրութեան երաշխաւորու-
թիւնը:
- 3) Բանտարկվածների կամ քաղաքական յան-
ցանքով դատաւարութեան հայերի ամբիստիան
հնարումը:
- 4) Հայ էմիգրանտների և աքսորականների վե-
րադարձը:
- 5) Առկա մնացած սովորական քրէական դա-
տաստական գործերի վերջնական կարգաւո-
րումը:
- 6) Բանտերի վերահսկողութիւնը և բանտար-
կեաների դրութեան քննութիւնը:
- 7) Նահանգներում մտցնելի ընթացիկ գոր-
ծադրութեան վրա հսկելու համար՝ մի բարձր
յանձնաժողովի նշանակումը:
- 8) Կ. Պոլսում մի մնայուն հսկող կոմիտեի
հաստատումը:
- 9) Սասունի, Տաւրիկի և այլ տեղերի դէպ-
քերի ժամանակ հայերի ունեցած զոհերի և կը-
քած վնասների հատուցումը:
- 10) Կրօնական հաւատալիտութեան հետ կապ-
ված գործերի կանոնաւորումը:
- 11) Հայերի վաղեւած իրաւունքների և առանձնա-
յնորոշումների պահպանութիւնը և ձեռք գործա-
դրութիւնը:
- 12) Ասիական թիւրքիայի միւս նահանգների
հայերի վիճակի բարելաւումը:

I

ՎԻՃԱԿՆԵՐԻ ԹԻՎ ՊԱԿԱՍԵՅՆԵԼԸ

Քանի որ ընթացիկները պէտք է մտցնեն իր-
դումի, Բիթլիսի, Վանի, Սիւսի, Մամուրէթ
Խէ-Աղզիի և Դիարբէքիի վեց նահանգներում,
պէտք է աշխատել այդ վիճակների թիւը պա-
կասեցնել: Այդպէս անելով կարելի է առաջ բե-
րել վարչական ընդհանուր ծախսերի որոշ խա-
յողութիւն, և քաջանելով վալաների թիւը, թերեւ
զերանցել նրանց ընտրութիւնը. մի և նոյն ժա-
մանակ բարձրացնել նրանց հեղինակութիւնը՝ լա-
ւացնելով նրանց նիւթական վիճակը: Այդ բոլո-
րը պէտք է կատարել այնպիսի եղանակով, որ

այդպէս անելով իրենց վերածվի այնպի-
սի էտնոգրաֆիական խմբերի, որոնք ամեն մի
նահանգի վարչական ստորաբաժանների մէջ
ըստ կարելւոյն համայնել լինեն:

Մանօթիւն.—1875 թիւից 10 տա-
րի առաջ, Էրզրումի էյալէթը (չրջան) բաղ-
կացած էր հետեւեւ գաւառներից.—Ջը-
ղըր, Կարս, Էրզրում (այժմեան վիլայէտը),
Նոյնպէս Վան, որ պարունակում էր իր մէջ
Հէքէարը, Բիթլիս և Մուշ: Այդ էյալէթը,
1877—78 թ. պատերազմից յետոյ հետ-
զհետէ բաժանվեց հինգ վիլայէտի և երկրի
այն մասը, որ մնաց թիւրքիայի ձեռքում,
բաժանվեց հետեւեւ վիլայէթների՝ Էրզ-
րումի, Վանի, Հէքէարի և Մուշի: Այնու-
հետև Հէքէարի գաւառը նորից միացրվեց
Վանի վիլայէթին, իսկ Մուշի գաւառը՝ նոր
կազմված Բիթլիսի վիլայէթին: Դրանից յե-
տոյ էր, որ Մամուրէթ-Խէ-Աղզի սանջակը
գարձաւ վիլայէտ, որի հետ միացվեցին մի-
քանի հարեան հողեր: Այն ինչ, Տէրափի
վիլայէտը կրկին գարձաւ սանջակ:

II

ՎԱԼԻՆԵՐ ՆԵՒ ՆԱԿԵԼՈՒ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Մեծ պետութիւնները, կարեւոր նշանակութիւն
տալով վալաների ընտրութեանը, որոնցից էապէս
կախված է Բերլինի դաշնագրով նախատեսված
ընթացիկների իրաւորումն, որոնք են առաջադ-
րութիւնների անհէ Բարձրագոյն Դրանը Իւրաքա-
նիւր գէպը, երբ վալանի պաշտօնի համար կընտր-
վի մի անդամը ամեն: Որովս զի այս կէտի
վերաբերութեամբ օսմանեան կայսերական կա-
ռավարութիւնը ազատ լինի անհաճոյ թիւրքիա-
ցութիւններից, մեծ պետութիւնների ներկայա-
ցուցիչները անհրաժեշտ են համարում, որ վա-
ղորքը, կիսապաշտօնական ձևով, իրանց յայտնի
այն անձի անունը, որի վրա ընկնելու է ընտ-
րութիւնը:

III

ԱՄՆԻՍՏԻԱ

Նորին կայսերական մեծութիւն Սուլթանը
ընդարձակ ամբիստիա (ներումն) պէտք է հորհի-
այն բոլոր հայերին, որոնք մեղադրվում են կամ
դատաւարութեան են քաղաքական յանցանքների
համար, և որոնց վերաբերութեամբ ապացուցված
է, թէ նրանք անմիջապէս մասնակից են ընդ-
հանուր քրէական յանցանքների:

IV

ԷՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՐԳՈՒՄԸ

Բոլոր հայերը, ինչ կրօնի էլ պատկանէին, ո-
րոնք առանց դատաստանի աքսորված են Օսմա-
նեան պետութեան սահմաններից կամ իրանց
ընտանիք գաւառներից դուրս, կամ որոնք ստի-
ված են եղել պանդխտել՝ աղքատութեան կամ
ուրիշ հանգամանքների հորհրդով, առանց մաս-
նակցած լինելու որ և է քրէական գործում,
թողութիւն պէտք է ստանան ազատ կերպով
ուր նրանք առաջ ապրում էին, առանց որ և է
Հնդկանների տեղական իշխանութիւնների կողմից:
Նրանք նորից պէտք է ստանան այն սեփական
նութիւնները, որ նրանք ունէին երկրի թողնե-
լուց առաջ:

V

ԿԱՆՈՆԱԻՐ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՀԱՍՏԱՏՈՒՄՆ

Այն քրէական յանցանքների և ոճիրների գոր-
ծերը, որոնք ներկայումս դատաստանական քն-
նութեան տակ են, պէտք է լուծուին ստանան,
առանց յետաձգութեան: Կ. Պոլսից պէտք է ու-
ղարկվեն վիլայէտները դատաստանական յատուկ

յանձնաժողովներ, որոնք իւրաքանչիւր սանջակի
գլխաւոր քաղաքում պէտք է չտապեն քննել չը
վճռված գործերը: Նրանց վճիռները չը պէտք է
ենթարկվեն բողոքի (appeal): Այդ յանձնաժո-
ղիւնքը պէտք է բաղկացած լինեն մէկ նա-
խագահից և երկու անդամից, մէկը մասնա-
տանի, միւսը քրիստոնեայ: Դրանց պէտք է
ընկերանայ մի դատաստանական քննիչ և մէկ
պրօկուրոր: Վերջին պաշտօնեաներից մէկը պէտք
է քրիստոնեայ լինի:

VI

ԲԱՆՏԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Կ. Պոլսից պէտք է ուղարկվեն բարձրատի-
ւան պաշտօնեաներ՝ քննելու բանտերը իւրա-
քանչիւր վիլայէտում և ուսումնասիրելու նրանց
նիւթական պաշտօնները, բանտարկեալների վի-
ճակը և այն թէ ինչպէս են նրանց պահում:
Նրանք պէտք է քննեն նոյնպէս և բանտարկեա-
լների ու պահապանների վարմունքները, և կարող
են առաջադրել, որ անմիջապէս արձակվեն և
դատաստանի ենթարկվեն այնպիսիները, որոնք
չեն կատարել այն կանոնները, որ սահմանված
են բանտային օրէնքներով:

Այդ բարձրատիւան պաշտօնեաներից իւրա-
քանչիւրը պիտի ունենայ մի օգնական, որ պէտք
է լինի քրիստոնեայ, եթէ պաշտօնեան մասնա-
տանի է, և հակառակը՝ Նրանք պարտաւոր են,
ոչ աւելի քան չորս ամսվայ ընթացքում, պատ-
րաստել մի զեկուցագիր, որը պէտք է պարու-
նակի նրանց նկատողութիւնները իրանց միս-
տիայի արդիւնքների մասին, և ցույց տալ այն
բարեփոխութիւնները, որոնք անհրաժեշտ են
բանտերի վիճակը և դրանց պաշտօնեաների
գործունէութիւնը լաւացնելու համար:

VII

ԲԵՅՈՐՄԱՆԵՐԻ ԳՈՐԾԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱ ՀՍՈՂ
ԲԱՐՁՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Նոր վալաները, նշանակվելու պէս, պէտք է
գնան վիլայէտի գլխաւոր քաղաքը՝ կազմակեր-
պելու նահանգական վարչութիւնը, համաձայն նոր
ծրագրի հիմունքների:

Նրանք պէտք է տեղաւորեն կառավարութիւ-
նից նշանակված մոթեւարիֆներին և գալմա-
զաններին, և իւրաքանչիւր կազմուած բաժանե-
նահանգների հողերը: Նրանք պէտք է կազմեն
ընտրողական ցուցակներ, և պէտք է կատարել
սան նահանգների խորհուրդների և միւղիւրների
ընտրութիւն:

Նրանք պէտք է հետեն, որ հարկ հաւաքող-
ները ընտրվեն առանց յետաձգման, որ նահան-
գի բիւզժէտի որոշումը և տուրքերի բաշխումը
վարչական մասերում կատարվի, որքան կարելի
է չուտ:

Այս ընթացիկների շուտ և ձեռք կատարումը
պէտք է դրվի մի Բարձր Կոմիտեի տակ վրա, որը
յատկապէս պէտք է ուղարկվի նորին մեծութիւն
սուլթանից, և որի ընտրութեանը հաւանութիւն
պէտք է տան պետութիւնները: Իր պաշտօնավա-
րութեան ամբողջ ընթացքում, նա պէտք է ու-
նենայ լիախառար իշխանութիւն վալաների վրա,
որոնք պարտաւոր են զեկուցանել նրան այն բո-
լոր միջոցների մասին, որոնց ձեռնարկելու են
նոր կանոնները գործադրելու համար:

Կայսերական Բարձր Կոմիտեից պէտք է
ընդունի խնդրագրիւնք և ծանուցումներ ընա-
կիչների կողմից, և պէտք է վարվի նրանց հետ,
նոր օրէնքների սահմաններում: Նա իր միտքի
պէտք է կնքի մի ընդհանուր քննութիւն կատա-
րելով բոլոր վիլայէտներում, և պէտք է ունենայ
իշխանութիւն չը թողարկել այն միջոցները, ո-
րոնք համաձայն օրէնքի և նոր կանոնների, չեն
կարող գործադրվել:

Կայսերական Բարձր Կոմիտեից ինչ, նրա պաշ-
տօնավարութեան միջոցին, պէտք է ուղեկցի մի
օգնական, որը պէտք է լինի քրիստոնեայ, եթէ
Կոմիտեիցը մասնատական է, և հակառակը:

VIII

ՎԵՐԱՀԱՅՈՂ ՄՆԱՅՈՒՆ ԿՕՄԻՏԵՑ

Բարձրագոյն Դրան մէջ պէտք է հաստատվի
մի վերահսկող մնայուն կոմիտե, որը պէտք է
հսկէ ընթացիկների ձեռք գործադրութեան վրա:
Այդ կոմիտեի նախագահը պէտք է լինի կայս-
րութեան քաղաքական կամ զինուորական
բարձր պաշտօնեաներից մէկը: Կոմիտեի պէտք
է կազմված լինի վեց անդամներից, որոնք
պէտք է ընտրվեն պետութեան քաղաքացիական
բարձր պաշտօնեաների միջից, հմուտ վարչա-
կան, իրաւաբանական և ֆինանսական գործե-
րում, երեքը մասնատական, իսկ միւս երեքը
քրիստոնեայ:

Այդ կոմիտեի պէտք է նիստ ունենայ Բ.
Դրան մէջ, առաւօտը ամիսը մի անգամ:

Կոմիտեի պաշտօնը պիտի լինի հսկել օրէնք-
ների և կանոնների ձեռք գործադրութեան վրա,
տեղեկացնել Բ. Դրան այն անկանոնութիւնների
մասին, որոնք կը նկատվեն ազմիստարացիայի
մէջ և մատնանիլ անել այն պաշտօնեաների
վրա, որոնք լիովին չեն կատարում իրանց պար-
տաւորութիւնները, ընդունել խնդրագրիւնք,
քննել ազգաբնակչութեան կողմից եղած ծանու-
ցումները և դատաւարները, նոյնպէս և այն յայ-
տարարութիւնները, որոնք կը համարեն կոմիտե-
ին համայնքների ներկայացուցիչների կողմից:

Այդ կոմիտեի պէտք է ուղեկցի դեսպանները,
իրանց թարգմանների միջոցով, այն բոլոր հա-
ղորդագրութիւնները և տեղեկութիւնները, որ
նրանք անհրաժեշտ կը համարեն:

Կոմիտեի կարող է պահանջել վալաներից զե-
կուցագրեր՝ այն հարցերի մասին, որ ինքն կա-
րելու կը համարի քննել: Տարին երկու անգամ՝
ընդհանուր նահանգապետները պէտք է ուղար-
կեն կոմիտեին մանրամասն յայտագիր՝ բանտե-
րի վիճակի և բանտարկեալների դրութեան մա-
սին:

Կոմիտեի, երբ յարմար կը համարի, կարող
է ուղարկել իր անդամներից մէկին կամ մի քա-
նիսին՝ վիլայէտներում պտուղւո՝ քննութիւն կա-
տարելու համար:

Կոմիտեի պէտք է ներկայացնի Բարձրագոյն
Դրանը զեկուցագրեր այդ բոլոր հարցերի մասին,
և իրաւունք պէտք է ունենայ անմիջական յարա-
բերութիւնների մէջ մտնել վալաների և միստա-
րական իրաւասու (competent) զէպարտամենտե-
րի հետ:

IX

ՍԱՍՈՒՆԻ, ՏԱԼԻՐԻԿԻ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵՐԻ ԴԵՊԵՏԵ-
ՐԻ ԶՈՀ ԳՆԱՅՈՒՄ ՀԱՅԵՐԻ ՎԱՐՁԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Սասունի, Տաւրիկի և այլ տեղերի դէպքերի
միջոցին, թէ իրանց անձով և թէ իրանց գոյքով
վնասված հայերը պէտք է ստանան իրանց պատ-
շաճաւոր հատուցում և վարձատրութիւնը:

Կայսերական Բարձր Կոմիտեից ինչ, նրա պաշ-
տօնավարութեան միջոցին, պէտք է ուղեկցի մի օգ-
նական, որը պէտք է լինի քրիստոնեայ, եթէ
Կոմիտեիցը մասնատական է, և հակառակը:

X

ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՍԱՓՈՒԹԻՒՆ

Բ. Դրան պէտք է հետի, որ կրօնական հա-
ւատալիտութիւնները հաստատված լինեն այն
ապահովող սկզբունքների վրա, որ տալիս է
1856 թիւի Հատուկ-Հիւանդներ (թ.թ. 10, 11, 12)
և որոնք, յաճախ, իրականութեան մէջ մնում են
առանց գործադրութեան:

Այն անձինք, որոնք կը կամենան կրօնաւորի

լինել, պէտք է լինեն չափաճառ, բացի դրանից իրաւունք կունենան կրօնաւոր լինել միայն մի չափով անցած այն օրից, երբ տուել են յայտարարութիւն իրանց զիտարարութեան մասին, և այդ չափովայ ընթացքում նրանք պէտք է գտնուեն իրանց դատարարութեան պետի հսկողութեան տակ:

XI

ՀԱՅԵՐԻ ԱՌԱՋԱՆՈՒՄԸ ԶՆՈՒՄԵՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՒՄԸ

Բ. Գուրը պէտք է ձեռք հրահանգներ տայ իշխանութիւններին արգելելու համար, որ չեն խախտուեն հայոց հոգեւորականութեան և հայ համայնքների այն աւանդաւորութիւնները և իրաւունքները, որոնք յատկացրած են նրանց 1863 թվի սահմանադրութեամբ (Հայերի Օրգանական Սահմանադրութիւն) և սուլթանների հորհրած բեթարներով:

XII

ՀԱՅԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՓՈԹՐՈՒՄԻՆԻ ՄԻՈՒ ՆԱՀԱՐԱՐՈՒՄԸ

Փոթր-Ասիայի այն վիլայէտներում, որտեղ հայ ազգաբնակչութիւնը որոշ սանձաւորութեամբ կազմում է ընդհանուր ազգաբնակչութեան մի նշանաւոր մասը, այնպէս, վարի մօտ, պէտք է լինի մի յատուկ քրիստոնեայ պաշտօնեայ, որին պէտք է յանձնվի հայերի պաշտպանութիւնը: Այդ պաշտօնեան պէտք է ընդունի հայ ազգաբնակչութեան բողոքաբերը և խնդրաբերը, և հասցնի նրանց ի դիտութիւն վաղի, որը քրիստոնեայ պաշտօնեայի համաձայնութեամբ, ընթացք կը տայ նրանց, համեմատ դրանց բովանդակութեան:

Այդ պաշտօնեաները, բացի դրանից, պէտք է կանոնադրապէս ղեկուարարներ ներկայացնեն Ա. Պօլսի վերահսկող մնայուն կօմիտեային: Այն վիլայէտներում, ուր կան որոշ տեղեր (ինչպէս Հալիպէ, Ալեքսանդրի վիլայէտում և Զէյթունը՝ Հալիպէի վիլայէտում), որտեղ հայերը կազմում են ազգաբնակչութեան մեծամասնութիւնը, այժմեան վարչական կազմակերպութիւնը պէտք է բարեփոխվի և նախ և բոլոր կազմութեան վերաբերեալ ընթացիկների ծրագրի պահանջները պէտք է գործադրվեն այն տեղերում, որոնցից նախապէս կը կազմվեն վարչական միութիւններ:

ԾՐԱԳԻՐ

Վ Ա Ր Զ Ա Կ Ա Ն Ի Ե Ֆ Օ Ր Մ Ն Ե Ր Ի

որոնք պէտք է մտցնվեն Փոթր-Ասիայի արևելեան նահանգներում, այժմեան էրզրումի, Բիթլիսի, Վանի, Սիվասի, Մամուրէթ-Ուլ-Աղիի և Գիարբեքի ի վիլայէտներում:

I

Վ Ա Լ Ի Ն Ե Ր

Յօդ. 1. Վալին պէտք է ընտրվի պետութեան բարձրագոյն պաշտօնեաներից, առանց խնդրութեան կրօնի, որը վկայված կը լինի իբրև ամենից խելացի, ընդունակ և անխնայ մարդ: Հետևապէս, այն անձինք, որոնց նշանակումը ընդհանուր զօգուտութեան տարիք կը տայ, և կամ հասարակական ու քաղաքական պատճառներով անյարմար կը համարվի, չը պէտք է նշանակվեն վալիի պաշտօնի մէջ:

Բ. Գուրը, համաձայն լինելով, որ ընթացիկների և միջնորդների իրական գործադրութիւնը էականապէս կախված է այն անձերի բարձր յատկութիւններից, որոնք պէտք է վիլայէտների ադմինիստրացիայի գլուխ անցնեն, — ամեն ջանք գործ պէտք է դնի, որ այն պաշտօնեաները, որոնց կատարելութիւնը մտադր է նշանակել, ունենան պահանջված յատկութիւնները:

Յօդ. 2. — Այդ կոչումով նշանակված վալիները չը պէտք է յետ կանգնեն կամ փոխեն, բացի այն դեպքերից, երբ նրանք, օրինական քննութիւնից յետոյ, յանցաւոր կը ճանաչվեն հակաօրինական գործերի մէջ:

Նրանք պէտք է նշանակվեն հինգ տարով և նրանց լիազօրութիւնները կարող են նորագել:

Յօդ. 3. — Վալիները պէտք է ունենան պատգամաւոր օգնականներ (մօավլին), որոնք պէտք է լինեն քրիստոնեաներ, եթէ վալին ինքն մուսուլման է, և մուսուլմաններ, եթէ վալին քրիստոնեայ է: Մուավլիները, վալիների նման, պէտք է նշանակվեն նորին կայսերական անուշխանութիւն սուլթանից:

Նրանք պէտք է յատկապէս ուղարկվեն վալիի կողմից՝ վիլայէտի բնակիչներից խնդրագրերը ընդունելու, ոստիկանութեան և բանտերի վրա հսկելու և հարկերի վրա կօնորդ անելու համար: Նրանք ժամանակաւորապէս պէտք է կառավարեն վիլայէտը՝ վալիի բացակայութեան ժամանակ:

Վալին օժանդակում է նահանգական ընդհանուր խորհուրդը, որի ընտրութեան պայմանները կորուզվեն ստորեւ խորհրդի պարտաւորութիւնը պէտք է լինի խորհրդակցել հասարակաց շահերի վերաբերեալ խնդիրների մասին, ինչպէս են՝ հայտարարութեան ճանապարհներ շինելը, երկրաբանական կրէդիտի ֆօնդ կազմակերպելը, երկրագործութեան, առևտրի և արդիւնաբերութեան զարգացումը և հանրային կրթութեան տարածումը:

II

ՄԻՈՒԹԵԱՐԻՖԻԿԱՆԵՐ

Յօդ. 4. — Սլիվեսարիֆները, որոնք պիտի սանձաւորներ գլուխ անցնեն, պէտք է նշանակվեն նորին կայսերական մեծութիւն սուլթանից:

Ամեն մի վիլայէտում միութեսարիֆ պաշտօնեաների մի որոշ թիւը պէտք է քրիստոնեայ լինի: Քրիստոնեայ միութեսարիֆները պէտք է նշանակվեն այն սանձաւորներում, որտեղ քրիստոնեաները մեծամասնութիւն են կազմում: Այն վիլայէտներում, որտեղ միայն մի միութեսարիֆ կը լինի, նա պէտք է անպայման քրիստոնեայ լինի, եթէ վալին մահմեական է: Սլիվեսարիֆը օգնական կունենայ մի մուավլին, որը պէտք է լինի քրիստոնեայ, եթէ միութեսարիֆը մահմեական է, և հակառակը: Մուավլին պէտք է գործէ միութեսարիֆի փոխարէն, վերջինիս բացակայութեան ժամանակ:

III

ԳԱՅՄԱԳԱՄՆԵՐ

Յօդ. 5. — Գայմագամները պէտք է նշանակվեն նորին կայսերական մեծութիւն սուլթանից, վալիի առաջարկութեամբ: Նրանք ընտրվում են վալիի ձեռքով այնպիսի անձինքների միջից, որոնք վալիում են ազգաբնակչութեան լիազօրութիւնը և համապատասխանում են այն պայմաններին, որոնք պահանջվում են գայմութիւն ունեցող օրէնքներով:

Խաբաքանչիւր սանձաւոր զայմագամների պաշտօնների որոշ թիւը պէտք է յատկացրված լինի քրիստոնեաներին:

Քրիստոնեայ զայմագամները պէտք է նշանակվեն այն կազմներում, որտեղ քրիստոնեաները մեծամասնութիւն են կազմում:

Յօդ. 6. — Խաբաքանչիւր դէպքում քրիստոնեայ միութեսարիֆների և գայմագամների թիւը, յամենայն դէպս, պակաս չը պէտք է լինի վիլայէտի գայմագամների և միութեսարիֆների ընդհանուր թվի մէջ երրորդից:

Գայմագամը, միութեսարիֆի նման, պէտք է օգնական ունենայ մի մուավլին, որը պէտք է լինի քրիստոնեայ, եթէ գայմագամը մահմեական է, և հակառակը:

Միութեսարիֆներին և գայմագամներին կից պէտք է լինի մի խորհուրդ, նման ընդհանուր նահանգական խորհուրդին:

Կազմի խորհուրդը ընտրվում է նահանգների խորհուրդների կողմից, իսկ սանձաւոր խորհուրդը ընտրվում է կազմների խորհուրդների կողմից: Նահանգական ընդհանուր խորհուրդը ընտրվում է սանձաւորների խորհուրդներից:

Ոչ մի պաշտօնատար անձ չը պէտք է լինի այդ խորհուրդների անդամ: Խորհուրդներին պէտք է նախագահեն վալիները, միութեսարիֆները և գայմագամները ըստ պատկանելոյն: Խորհուրդները պէտք է բաղկացած լինեն չորս անդամներից:

Ինչ, չը հաշուելով նախագահին, անդամներից երկուսը պէտք է մահմեական լինեն, երկուսը քրիստոնեայ:

IV

ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԶԵՄԵՆՆԵՐԸ (ՆԱՀԻԱՆԵՐԸ)

Յօդ. 7. — Խաբաքանչիւր կազմ բաժանվում է նահանգների (համայնական շրջաններ) որոշ թիւի:

Նահանգ մի հոգալին ստորաբաժանում է, որ պարունակում է իր մէջ չափ փոքր իրանց անշարժ կալուածներով, հողերով, արօտատեղերով և հողաբաժիններով: Նահանգի ամենանշանաւոր տեղը համարվում է գլխաւոր կենտրոն:

Խաբաքանչիւր նահանգի սահմանների որոշումը, ըստ կարելոյն, պէտք է կատարվի այնպէս, որ մի դատարանական պատկանող գիւղերը մտնեն մի նահանգի մէջ: Ընդհանրապէս խօսելով, պէտք է ուշադրութեան առնվեն սօսօգրագրութեան և էտնոգրագրութեան պայմանները, նաև ժողովրդի յարմարութիւնները:

Նահանգ պէտք է պարունակի իր մէջ ամենափոքր 2000 բնակիչ, ամենաշատը 10,000 բնակիչ: Գիւղերի խաբաքանչիւր մի խումբ, որ կազմում է նահանգի մի մասը և որի բնակիչները 1000-ից պակաս չեն, կարող է պահանջել, որ իրանից առանձին մի նահանգ կազմվի այն պայմանով, եթէ յանձն առնի նոր վարչութեան ծախսերը:

Յօդ. 8. — Խաբաքանչիւր նահանգ պէտք է կառավարվի մէկ միւլիի ձեռքով, որի օգնականն է խորհուրդը, որ ընտրվում է ազգաբնակչութեան կողմից և բաղկացած է ամենափոքր չորս և ամենաշատը՝ ութ անդամներից:

Այդ խորհուրդը ընտրում է իր անդամների միջից միւլիի և նրա օգնական:

Միւլիի պէտք է պատկանի այն դատարանական, որին պատկանում է բնակիչների մեծամասնութիւնը, իսկ օգնականները՝ միւս դատարանական: Խորհուրդը պէտք է նշանակի ունեւայ մի քարտուղար:

Յօդ. 9. — Եթէ նահանգների բնակիչները բոլորը պատկանում են մէկ դատարանական, խորհրդի անդամները պէտք է ընտրվեն այդ դատարանական պատկանող բնակիչներից: Եթէ համայնական շրջանի ազգաբնակչութիւնը խառն է, փոքրամասնութիւնը պէտք է ունենայ իր ներկայացուցիչը, համեմատ իր թվական կարեւորութեան, բայց այն պայմանով, որ 25 անից պակաս չը լինի:

Յօդ. 10. — Միւլիները պէտք է ստանան նահանգի բնակչութեան մի որոշ օրէնք: Նշանակված պէտք է մի որոշ օրէնքի տրվի խորհրդի քարտուղարին:

Որոշ շինութիւն պէտք է յատկացվի նահանգի խորհրդի և համայնական շրջանի վարչութեան տուեանի համար:

Յօդ. 11. — Նահանգի խորհրդի անդամները պէտք է լինեն ստանաւոր հպատակ, պէտք է չունենան նահանգում, պէտք է 30 տարեկան լինեն, և ընտրվեն այն անձանց միջից, որոնք վերջապէս են պետութեանը տարեկան 100 պիստոն հարկ: Նրանք դատարանի տակ ընկած չը պէտք է լինեն:

Յօդ. 12. — Հէյը որ խորհուրդը իր միջից ընտրի միւլիին, նրա անունը պէտք է հաղորդվի վալիին, որը պաշտօնապէս կը հաստատի նրան, երբ կը հանդիպի, որ օրինական պահանջները կատարված են:

Յօդ. 13. — Սահմաններ, քահանաները, ուսուցիչները և կառավարութեան մէջ պաշտօն ունեցող ուրիշ անձինք չեն կարող միւլիի պաշտօն վաւերել:

Յօդ. 14. — Խորհուրդի անդամների կէսը պէտք է նորագելի ամեն տարի. միւլիները պէտք է մնան պաշտօնում երկու տարի: Միւլիները և անդամները չեն կարող վերընտրվել յաջորդաբար միանգամից աւելի:

Յօդ. 15. — Միւլիի և խորհրդի անդամների լիազօրութիւնները, ինչպէս և նրանց ընտրութեան և վերաբերման եղանակը պէտք է կանոնաւորվի, համաձայն Համայնքների վարչական կանոնադրութեան, յօդ. 14, 16, 17, 20, 21, 22, 23, 24, 25, 26 և համաձայն Projet de loi sur les vilayet de la Turquie d'Europe (§ 12):

Յօդ. 16. — Նահանգի պատկանող գիւղերի խաբաքանչիւր պէտք է ունենայ մի մուլիի, այն դէպքում, եթէ գիւղը մի քանի թաղեր ունի: Եթէ բնակիչները բաժանված են դատարանական թաղերի, խաբաքանչիւր թաղի և բնակիչների խաբաքանչիւր դատարանական համար մէկ մուլիի պէտք է լինի:

Յօդ. 17. — Ոչ մի գիւղ չէ կարող պատկանել երկու համայնական շրջանի՝ ինչ և լինի նրա բնակիչների վիճակը և թիւը:

Յօդ. 18. — Ստիկանութեան պաշտօնեաները նշանակվում են համայնական շրջանի խորհրդի ձեռքով, նահանգի ազգաբնակչութեան միջից, առանց կրօնի խորհրդանշան, և թիւով այնքան պէտք է լինեն, որ կարողանան բաւարարութիւն տալ թէ տեղական պէտքերին և թէ վիլայէտի ժամադրաբանայի ծառայութեան:

Յօդ. 19. — Նահանգի ստիկանական պաշտօնեաները պէտք է գրվեն միւլիի հրամանների տակ և պէտք է ունենան չառանցիկ կամ օրաշինների պաշտօններին համապատասխանող գլխաւորներ:

Նրանք պէտք է զինաւորված լինեն և ունենան մի համազգեստ, որի ձեռ կորուզվի յետոյ: Նրանք ունիկ կը ստանան նահանգի բնակչութեան, և բացի իրանց սովորական ծառայութիւնից, կարող են զբաղվել իրանց սովորական պարագայներով: Եւ Նրանք կարող են լինել հեծեալ կամ ոչ, նայելով իրանց ծառայութեան պահանջներին:

Ոչ մահմեականները, որոնք ենթակալ են «բէ-դէ-ապիլերէի» հարկին, և որոնք կարող են ստիկանական ծառայութեան կազմել, ազատ կը լինեն այդ հարկի վճարումից, քանի նրանք կը դառնան ստիկանական ծառայութեան մէջ:

Յօդ. 20. — Նահանգի ստիկանական պաշտօնեաների առաջին պարտաւորութիւնը պէտք է լինի պահպանել կարգը և խաղաղութիւնը իրանց երկրի մէջ և նահանգի ճանապարհների վրա: Բացի դրանից նրանք պէտք է լինեն միւլիի հրամանի տակ և պատրիս ուղեկցելու համար մարդիկ առն, այլ և օգնեն միւլիին իր կատարած երկու դատարանական վճարումը և օրէնքի պահանջները:

V

ԺԱՆԳԱՐԱՐՈՒՄ

Յօդ. 21. — Ամեն մի նահանգում, յատուկ օրէնքի հիման վրա, կը կազմակերպվի նահանգական ժամադրաբան, որի բարձր և ստորին պաշտօնեաները կընտրվեն կայսրութեան հպատակների բոլոր դատարարների միջից:

Ժամադրաբան պէտք է կազմակերպվի վիլայէտում, բոլոր բնակիչների միջից, առանց խորհրդանշան ցեղի կամ կրօնի: Ժամադրաբանի երկու երրորդականը կը կազմվի նահանգի ստիկանական պաշտօնեաների միջից, կէսը մահմեական, կէսը ոչ-մահմեական: Մնացած մի երրորդը բաղկացած պէտք է լինի չառանցիկ և բաշտօնեաներից և պէտք է ընտրվի կանոնաւոր զօրքի ամենաբնագումար մարդկանց միջից:

Գիտելիքների և զինաւորութեան կողմից ժամադրաբան պէտք է գտնվի զինաւորական մի-նիստի իշխանութեան տակ: Նրա ծախքը պէտք է հոգալի վիլայէտի հաշուով: Ժամադրաբանի գնդի օֆիցերների ունիկը պակաս չը պէտք է լինի, քան կանոնաւոր զօրքի համապատասխան ստիկանի օֆիցերների ունիկը:

VI

ԲԱՆՏՏԵՐԸ

Յօդ. 22. — Այն անձինք, որոնք բանտարկված են, բայց դեռ չեն մեղադրված, չը պէտք է խառնվեն այն անձանց հետ, որոնք արդէն կրօնում են իրանց պատիժը՝ դատաւճիւրից յետոյ: Բանտերը պէտք է կառուին առողջապահական անհրաժեշտ պահանջները, և բանտարկեալների հետ չը պէտք է վարվեն կապտութեամբ: Վալին պիտի նշանակի բանտերի գլխաւորներին և պահապաններին, որոնք մէջ պէտք է լինի ստիկանական պաշտօնեաների և ժամադրաբանի մի-նիստի միջից:

ՆԵՐԿԱՅ 1895 թ. ԲԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

«ՄՇԱԿ» տարեկան գիրքը թէ Ռուսաստանում և թէ Արտասահմանում 10 թուրքի, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 թ., ինն և ութ ամսականը՝ 8 թ., եօթ ամսականը՝ 7 թ., վեց ամսականը՝ 6 թ., հինգ ամսականը՝ 5 թ., չորս ամսականը՝ 4 թ., երեք ամսականը՝ 3 թ., երկու ամսականը՝ 2 թ., ամսական 1 թուրքի:

Գրել «ՄՇԱԿ» կարելի է ԽՐԱԳՐԱՏԱՆԸ:
Օտարաբարձարացիները պէտք է դիմեն հետևալ հասցեով՝ Тифлис. Редакция «МШАКЪ»: Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՄԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնոյի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ—11—12 ժ. փրարու-
թութեան, սիֆիլիս և վնասական հիւանդու-
թիւնների:
Գ. Գ. ԶԻՆՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին
և ներքային:
Կին բժիշկ՝ Ա. Ի. ՍՈՐՈԿԻՆԱ—ՇՁԵՐԻՆԻՆԱ—
10—11 ժ. կանանց և ներքին:
Ի. Ֆ. ՊՐՈՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ակնաշիւ, կո-
կորդի, քիթի և կրծքի, երկու-չորս, չորեքշաբ-
թի և ուրբաթի:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ժ. ներքին և երե-
կայոց:

ԵՐԵՎԱՆԵՐԸ՝

ՊՐՈՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեք. հինգ. և շա-
բաթի:
Ա. Գ. ԳՈՐԻՍ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէղի և
տեսական օրգանների, ներքին և արտին:
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ—7—7 1/2 ժ.
Ա. Գ. ԳՈՐԻՍ քիմիական և խոշորացուցական
հետազոտութիւններ է անում մէղի, խիւի, ա-
րան, կաթի և այլն:
Վճար 50 կ.: Համախորհրդի (կոնսիլիումի) և
օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերադասու-
թիւնը կապու է ԱՌԱՍԱՐԳԵԱՆԻ:
(№ 72)

ԲԺՇԿԱՊԵՏ

Ե. Ի. ՖՐԱՆՑԻՈՒՍ

(Սոլոյակ, Վոլոնտէրայայ և Բոլշէֆսկայայ
փողոցների անկիւն)

Վերադառնալով ընդունում է հիւանդ-
ներին 5—7 ժամ երեկոյեան: Մասնագի-
տութիւնն է ԱԿԱՆՔԻ ԵՒ ԿՈՎՈՐԻՏԻ հիւան-
դութիւնները:
(№ 54) 8—10

ԹԱԻՐԻԶԻ

«ՍԷՐ» ընկերութեան գրաւմ ճա-
ռանց արդէն բացված է:
Կանխավճարով և կոմիսիոնով ընդունում
և վաճառում է զրքեր, դասագրքեր, պատ-
կերներ և ամեն տեսակ ուսումնարանական
առարկաներ նաև խաղալիքներ—Ընդու-
նում է յանձնարարութիւններ:
Ընկերութեան հասցեն՝ TAURIS (Perse)
Comité D'Instruction arménienne «Ser»:
(№ 50) 5—5

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է „ՄԻՐՁԱ ԻՍԿԱՆԴԵԱՐ“

Գրեց՝ ԲԷԼ ՄԵՆԵՍԵԱՆ


ԳԻՆԵՆ Է 50 ԿՈՊ.

Վաճառվում է յօդուտ չքաւոր ուսանողի:
Գրել թիֆլիս, կենտրոնական գրաւաճա-
ռանոցին:
(№ 51)


ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

- 1) «ԵՎԵԼԻՆԱ», Էսթլադ, գիրք, է . . . 50 կոպ.
 - 2) «ՍՅՍՏԵՂ ՆԻ ԱՅՆՏԵՂ», . . . 10 »
 - 3) «ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖ. ТУРЕЦКИХ АРМАНЬ» . . . 25 »
 - 4) Նոյնը գերմաներէն լեզուով . . . 25 »
 - 5) «DIE HUNTERSNOTH IN TURKISCHE ARMENIEN» . . . 20 »
- Վաճառվում է «Մշակ» խմբագրատանը և
Թիֆլիսի գրաւաճառանոցներում:
(№ 127) 6—10

ԱՄԵՆԱՅՆՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՐՕՅԱԼՆԵՐ



ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ



ՖԻՍՀԱՐՄՈՆԻՈՒՄՆԵՐ, ԶՈՒԹԱԿՆԵՐ, ԿԻ-
ԹԱՌՆԵՐ, ՖԼԵՏՏԵՐ, ԿԼԱՐՆԵՐՆԵՐ, ԶԱՅՆԱ-
ԽԱՋԵՐ, ԼԱՐՆԵՐ ԵՒ ԱՅԼՆԵՐ, ԵՒ ԱՅԼՆԵՐ:



Բոլոր տեսակ գործիքների համար գի-
նը կարելի է վճարել մաս-մաս:

ՆՈՐ-ՊՐԷՅՎԱՆՈՒՐԱՆՏՆ

աղարկվում է ձրի:
ԵՐԱԺՇԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ԶԱՅՆԱԽԱ-
ՋՆԵՐԻ ԿՈՎԿԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

ԴԷՊՕ

Բ. Մ. ՄԻՐԻՍՏԱՆԵԱՆԻ

Մատակարար Կայսերական Երաժշտական
Ընկերութեան
Музыкальное депо Б. М. Мириманяна,
ТИФЛИСЬ,
Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.
(№ 35) 2—20

Питатель-
ный
Напиток.

Чистый
Какао
Блокеръ

ԿԱԿԱՕ
Թաղա՛նում է միայն 4 կոպ:
Բաղկան Կատարատութիւն:
ՄԱՔՈՐ ԵՒ ՄՆԵՂԱՐ ՓՈՇԻ-
Աւաճարվում է անողջադրեան
և երկանների համար:

Միակ պահեա կովկասում՝ Բաղձրաբոյ հաստատութիւնը գերազանցաբար ավարտելով վա-
ճառան կովկասեան ընկերութեան մէջ Թիֆլիսում և Բաղրատն
№ 120. 90 թ.

ՔՈՒԹԱՅԻՍԻ ԴԵՐԱՋԱՆՑ ԿԻՐ

որը արտասովոր սպիտակութիւն ունի և մեծ ամրութիւն ու խնայողութիւն է տալիս
շինութիւններին, ծախվում է վազոններով Թիֆլիսի երկաթուղու կայարանում, պուրը
19 կոպէկով:

Գրմել ինժեներ ԼԵԱՎԻՆՍԿԻՆ. Բոլշայա Վոլոյոզնայա, տ. № 24, տուն Լա-
անվի:
(Շ.—№ 50) 5—10

ԿԱԿԱՕ ԲԼՈՕԿԵՐ

ՄՆԵՂԱՐ ԽՄԻՉԻ (զիւստը պահեստը Ռուսաստանի համար
«ԵՎԱ» ֆիրմայի մէջ. (С.-Петербургъ, Большая Морская, 38).
Ծախվում է կօնիակ և դեղային ապրանքների բոլոր լաւ մաղաղիւններում 1/1,
1/2, 1/4 և 1/8 կիլոգրամանոց թիթեղեայ սուպերի մէջ:
(GRAND PRIX) Բարձրագոյն պարգև Անտէրպէրի համաշխարհային ցուցա-
հանդիսում 1894 թւին:
(№ 151) 36—50

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ 1881 թ.

„ՐՈՍՍԻՍ“

Ապահովագրական ընկերութեան մէջ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍԻ ԴԻՄԱՐԱԳՆՈՒՆԵՐ 20,500,000 ՐՈՒՔԼԻ

Ընկերութեան տոկոսներ թղթերը պահվում են պետական բանկում:

Օրինակ: Ընտանիքի հայրը, 34 տարեկան, ապահովագրվում է 5,000 Ր., որ
պէտք է տրվի կնոջը և երեխաներին անյապաղ մահից յետոյ: Այդպիսի
ապահովագրութեան համար նա վճարում է երեքամսական պրէմիա 30 Ր. 80
կոպէկ:

Ապահովագրութիւնները ընդունվում են 1000-ից մինչև 100,000 Ր. դումար-
ների մէջ անձի կեանքի համար:

Ընկերութիւնը ապահովագրում է առանձին շահաւէտ պայմաննե-
րով և արտօնութիւններով հիւանդութեան և աշխատանքին առնչուող հիւան-
դութեան դէպքում:

Ապահովագրական գումարը տրվում է և մահվան դէպքում տարափոխիկ հի-
ւանդութիւնից, խոլերայից և այլն:

Յունվարի 1-ին 1894 թւի «Րոսսիա» ընկերութեան մէջ ապահովագրված էին
28,246 անձինք 75,621,010 Րուբլի դրամագլխի:

Ապահովագրողները մասն ունեն ընկերութեան եկամուտներից:

Ապահովագրողների զիւլիդէնտը 1893 թւի համար—12% է:

Ապահովագրութեան համար յայտարարութիւնները ընդունվում են և ամեն
տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая
Морская, սեփական տուն, № 37), ընկերութեան Թիֆլիսի բաժնում
(Сергиевская, д. № 6) և ընկերութեան գործակալութիւնների մէջ կայսրութեան
բոլոր քաղաքներում:
(№ 85) 4—15

Ա. Զ. Դ.

ՍԱԼՄԱՍԻ Հաֆիլան գիւղի «Դրասիրաց ընթերցարանի» վարչութիւնը պատիւ
ունի զիմեաւ յարգելի պապ. խմբագիրներին, հեղինակներին, թարգմանիչներին և այլ
բարեմիտ անձանց, որ չը զլանան նուիրելու իրանց հեղինակութիւններին, թարգմա-
նութիւններին, և այլ և այլ հրատարակութիւններին մի-մի կամ մի քանի օրինակ-
ներ այդ գրադարանին:

«Դրասիրաց ընթերցարանը» ներկայումս ունի 500 օրինակ գիրք, ստանում է
Թիֆլիսից, Կ. Պոլսից և այլ տեղերից 10 օրինակ լրագիրներ և հանդէսներ:

«Դրասիրաց ընթերցարանի» վարչութիւնը պատրաստ է վեց ամիս մի անգամ՝
մամուլի միջոցով հրապարակական հաշիւ տալ իր ստացած բոլոր նուէրների մասին:
Խնդրում ենք յարգելի նուիրատուներից զիմեւ այս հասցեով Թիֆլիս, Խոսրոսի
քարվանսարայ, Սոլոմոն Հատարթեանցին և Յակոբ Սարգսեանցին:

9—10 (№ 55)

Վարչութիւն



ՄԻՋՈՑ ԽԱՐԲՈՒՄԻ

Բժշկական գէպարաամէնտից թղթա-
տրված

ՕԼԳԱԿՏՈՐԻՈՒՄ ՆՈՒԳԻ-
ԼԻՆ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿԻ

Ծախվում է 40 կոպէկով

Դեղագործական Ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մէջ՝ Թիֆլի-
սում:
(№ 22) 20—30